Անցան տարիներ. Աւետարանի սկզբունքները եկեղեցուց ու դպրոցից սկսած՝ անյայտ մնացին, ծածկուեցին ժողովրդի աչքից, նա մի միայն անհասկանալի ծէս լսեց հոգևորականի բերանից, մի միայն ծիսապաշտութեան և ծիսական քրիստոնէութեան շնորհիւ թուլացաւ հաւատը մարդկանց մէջ և բնաւորութեան ոյժը՝ մանաւանդ ողջախոհութեան մէջ՝ տեղի տուաւ. լսուեց կրքի քարոզը, մարմնի պաշտպանման և փափկացման հոգը առաջին տեղը բռնեց. դրան միացան հազար սիմի գրգռիչ պատճառներ և միջոցներ, թուլացաւ օրէնքի և խղճի հսկողութիւնը, առաջ եկան տնտեսական նորանոր պահանջներ և խնդիրներ և ահա մենք այդ բոլորի շնորհիւ ականատես վկայ ենք մեր նահապետական սուրբ ամրոցի՝ ընտանեկան միութեան քայքայման, առանց քննել և չափել կարողանալու նրա հետևանքները։

Ի՞նչ հայացքներ կան մեր ժամանակում եկեղեցական ամուսնութեան, ընտանեկան կապի անխզելիութեան և ընտանիքի անդամների բարոյականութեան մասին. ինչ ճանապարհով մարդիկ յոյս ունեն իրականացնելու մաքուր և ուժեղ ընտանիքի բարոյականն ու գաղափարը, իսկապէս որոնք պէտք է համարուեն և են իսկական բուժիչ միջոցները, կաշխատենք յառաջ բերել հետևեալ անգամ։

Ե. Ա. Վ. Մ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Այս տարի սովորական հանդիսաւորութեամբ կատարուեցին սրբոց կուսանանց տօները Հռիփսիմէի, Գայանէի և Շողակաթի վանքերում։ Ազգիս Վեհափառ Հայրապետը կարողացաւ ներկայ գտնուիլ կուսանանց տօնին Ս. Հռիփսիմէի վանքում, որը շատ վայելուչ նորոգուած է թէ դրսից և թէ ներսից։ Ցանկալի է, որ բարեգործ

անձինք նայնպիսի դրութեան վերածեն նաև Դայանէի և Շողակաթի վանքերը. որոնց վերանորոգութիւնն իսկապէս մեծագումար ծախք չի պահանջում։

Վեհափառ Հայրապետի հրամանաւ Ս. Էջմիածին հասաւ Մայիսի սկզբներին Սանահնի վանքի վանահայր Գարեգին եպիսկոպոս Սաթունեանը։

Էջմիածին վերադարձան Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանն ու Կոբիւն վարդապետը, որոնք Վ. Հայրապետի հրամանով գնացել էին Թէլէթ։

Մայր Աթոռս հասաւ Կարուց վիճակի փոխանորդ Տ. Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը իւր վիճակի վերաբերեալ այլևայլ խնդիրների լուծումն խնդրելու համար։

Մայր Աթոռս վերադարձաւ և մեկնեց իւր պաշտօնատեղին՝ Նախիջևան ս. Իսահակ վարդապետը։

Բաքու վերադարձաւ տեղական հայ եկեղեցեաց դորձակալ ս. Մատթէոս վարդապետը, որը Վեհի հրամանով եկել էր Ս. Էջմիածին։

Վեհափառի հրամանով արտասահման ուղարկուեց ուսանելու Մայր Աթոռիս միաբան Ներսէս վարդապետ Թովմաղեանը՝ հանդուցեալ բարեգործ Ղուկասեանի հաշուով։

Վեհափառ Հայրապետան ի նկատի առնելով հեռագրեալ հասող բողոքները Սալմաստի փոխանորդ Մատթէոս վարդապետի արարքների մասին, մայիսի 27 ին հեռագրաւ արձակեց նրան փոխանորդութեան պաշտօնից և հրամայեց վերադառնալ Ցաճկաստան՝ իւր ծննդավայրը։